

ԹԻԻ 10

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Ժ.

2 Օգոստոս 1913



Տպագրութիւն Ժ. ՍՍ.Դ.Ա.Ն.
ՀԱՆՐԱՊԵՏ, Գուրշուկու Խան, Թիւ 7, Կ. ՊՕԼԻՍ

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ
(Ա. Վ. իմակ)

1. Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեան
2. Տ. Վահրամ Մանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կէզիւրեան
4. Տ. Տրդատ Քհնյ. Պոյանեան

(Բ. Վ. իմակ)

5. Տ. Մաղարիա Արքեպ. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բէլտահեան
7. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազազեան

(Գ. Վ. իմակ)

9. Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեան
10. Տ. Մաղարիա Եպիս. Տէրունեան
11. Տ. Միքայէլ քհնյ. Աշեան
- 12.

(Դ. Վ. իմակ)

13. Տ. Արիստակէս Ա. Քահ. Զիգմէեան
14. Տ. Խորէն Յարութիւնեան
15. Տ. Յուսիկ Քաջունի
16. Տ. Տաճատ Փաշաեան

(Ե. Վ. իմակ)

17. Տ. Եզնիկ Ծ. Վ. Պապեան
18. Տ. Հմայեակ Քահ. Էքսէրեան
19. Տ. Բաթող Քազմեան
20. Տ. Արէլ Երեցեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վ. իմակ)

Էյուպ Ս. Եղիա

21. Օննիկ Է. Մինասեան

Խաղաղիկ

22. Պետրոս Նալաճեան
23. Սմբատ Քեաթիպեան
24. Պետրոս Խօրասանեան

Մագրի-գիւլ

25. Երուանդ Է. Պէյազեան
26. Թազուր Սրեւեան
27. Տօթ. Լ. Մալխասեան
28. Յակոբ Պօյանեան
29. Յովհաննէս Իսազուլեան
30. Սարգիս Պէյրէեան
- 31.

Պէյիւ Բեհրէ

32. Զ. Զաւի Սլաօյան
33. Յովսէփ Գազազեան

Սան-Սթեփանօ

34. Դէորդ Է. Սարանեան

Օրթաթիւլ

35. Խաչիկ Է. Սըվաճեան
36. Տօթ. Ստեփան Քէրզեան

(Բ. Վ. իմակ)

Բերա-Իսար-Փաշա

37. Արամ Է. Հալաճեան
38. Մանուկ Ազարեան
39. Յակոբ Էսաեան
40. Ստեփան Գարեան
41. Տօթ. Վահրամ Թորգոմեան
42. Տիրան Կիւմիւշկէրտան
- 43.
- 44.
- 45.

Գարթալ-գնալը

46. Ա. Է. Վառմեան

Գուրուշէմէ

- 47.

Պէշիքաւ

48. Միհրդատ Է. Հայկազն

Ֆէրիզիւլ

49. Եղուարդ Է. Գարակէօզեան
50. Հրանտ Ասատուր
51. Մարկոս Նաթանեան
52. Յակոբ Պահրի

(Գ. Վ. իմակ)

Գաթիգիւլ

53. Անտոն Է. Թարազ
54. Աղասի Աղասեան
55. Եղուարդ Շիրինեան
56. Ներսէս Օհանեան
57. Սարգիս Էսմէրեան
- 58.
- 59.

Եէնի-Գարու

60. Պենոն Է. Տէյիքմէնեան
61. Վահան Փափազեան

Պալաթ

62. Տօթ. Կարապետ Է. Եաղուպեան
63. Յարութիւն Մոստիչեան
- 64.
- 65.

Սկիւտար Եէնի Մահալէ

66. Թորգոմ Է. Պօյանեան
67. Հմայեակ Խոսրովեան
68. Վահան Սուրէնեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆԱՏԱՇՐՁԱՆԻ

ՆԻՍՏ Ժ.

2 0qunusu 1913

ՆԱԽԱԳԱՀ.— ՏԵՂԱՊԱՀ ՍՐԲԱԶԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ.— ՏՕԲԹ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ԷՖ.

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկագիր Ասենապետաց Դիւանի, ի մասին Թրքահայոց կողմէ ամենայն Հայոց Հայրապետին մատուցանելի գրին:
2. Քննութիւն ճիւղական նախագծի՝ կանոնագրի Լեւոնապետի Ս. Յա-կոբեանց վանոց (Շարունակութիւն վիմաբանութեան):
3. Հարցապնդում ի մասին Գաբամանեան Է. ի սպանութեան:
4. Տեղեկագիր Խորհրդարանական Յանձնաժողովոյ ի մասին հանգուցեալ Երեցեան Ս. ի ամբաստանութեանց:

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐԸՆՏԻՐ ՏԵՂԱՊԱՀ Ս.Ի

Պատշոնի վերաբերեալ վարչութեան գիրք

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանի մէջ և ժամը 3.15ին, առեանք բացուեցաւ ի ներկայութեան 40 երեսփոխաններու, որոնց թիւը յետոյ յանգեցաւ 50ի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ժողովս բացուած է ի ներկայութեան 40 երեսփոխանաց: Այժմ պիտի կարգանք վարչութեան մէկ պաշտօնագիրը որով ի գիտութիւն մեզ կը հաղորդուի Տ. Գաբրիէլ եպս. Ճէվանիրճեանի Պատր. Տեղապահ ընտրութիւնը:



Ազնուաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Ամենապատիւ Տ. Յովհաննէս Արքայան Արքեպս. Արշարունի ինչպէս Պատկ. Ժողովոյդ, նոյնպէս և Արդար. Գործոց նախարարութեան հրաժարական մատուցած ըլլալով Կ. Պոլսոյ Պատրիարքական պաշտօնէն, Նորին Սրբազնութեան հրաժարականն ընդունուած է նաև կայսերական իրաւէով:

Հետևաբար, Ազգ. Կեդր. Վարչութեան խառն ժողովը՝ Ազգ. Սահմանադրութեան 21-ր. յօդուածին տրամադրութեանց համաձայն՝ ձեռնարկեց Պատր. Տեղապահի ընտրութեան, և գաղանի քուէարկութեամբ և քուէից առաւելութեամբ նոյն պաշտօնին կոչուեցաւ Բարձր. Տ. Գարրիէլ Ս. Եպս. Զէվահիրճեան:

Նորին Սրբազնութեան ընտրութիւնն իսկ ժողովոյ տեղեկագրով կայսերական կառավարութեան վաւերացման ենթարկուած և հաստատուած ըլլալով՝ ձեռնարկած է արդէն պաշտօնին: Հետևաբար, կը փութանք յայտագրել այս ընտրութիւնն Պատ. Ժողովոյդ ի գիտութիւն:

Ազգ. Կեդր. վարչութեան խառն ժողովը պարտք կը համարի իրեն այս առթիւ իւր շնորհակալութիւնն յայտնել Ամենապատիւ Տ. Յովհաննէս Ս. Արքեպս. Արշարունիի՝ այն համերաշխ գործակցութեան համար, զոր Նորին Սրբազնութիւնն իւր պաշտօնավարութեան օրով ընծայեց, և դիւրացուց Ազգ. վարչութեան դժուարին աշխատութիւնները:

Մնա՛մք խորին յարգանքօք

Ի դիմաց Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ Ե. Ծ. Վ. Փերսահեան Ս. Ե. Տերունեան

Ի դիմաց Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղ. Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ Տ. Երկանեան Ս. Գաբանեան

ԱՏԵՆ ԷՖ. — Ինչպէս երեւցաւ ներկայ գրին ընթերցումէն, Բարձր Տ. Գարրիէլ եպսկ.

Զէվահիրճեան Պատր. Տեղապահ ընտրուած է: Ներկայ առթիւ պարտք կը զգամ յանուն ժողովոյ շնորհաւորելու նորընտիր Պատր. տեղապահը: Զեր պաշտօնը Սրբազան Հայր, ծանր է և կնճռոտ, այլ սակայն վստահ ենք թէ իբր Պատր. Փոխանորդ ձեր երկարամեայ պաշտօնավարութեանը միջոցին ստացած վաղեմի փորձառութիւնէն պիտի օգտուի ազգը և ձեր պաշտօնն ալ տանելի պիտի լլայ:

ՏԵՂ. ՍՐԲԱԶՍՆ. — Մեր խորին շնորհակալիքը պարտիք յայտնել Պատ. Ժողովոյ այն շնորհաւորութեան համար որ կ'արտայայտուի իր յարգելի առնչակցութիւն միջոցաւ. իրաւի մեր տկարութիւնը չէր ներքեր ընդունելու այս բարձր պաշտօնը, սակայն լիապէս պիտի կատարեմք զայն, երբ կը տեսնենք որ Պատկ. Վարչութիւնը եռանդով, զգացումով և բարեացակամութեամբ կ'աշխատի օր աւուր բարձրացնել այս ազգին ճակատագիրը. առ այս շատ գոհ ենք: Մեր ուժը խիստ նուազ և տկար է. բայց ինչ որ կրնանք՝ այն պիտի քնենք: Պատկ. իսկ իսկ ժողովը Պատրիարքարանի սահմանադրական Տեսուչ Սորոսորդնեւրով կ'աշխատի, այսու հանդերձ գո՛ւք, Պատկ. երեսփոխաններդ էք որ ճանապարհը պիտի հարթէք, Իսկ մենք պիտի քալենք Կը տեսնեմ որ այս սեղանին վրայ շատ խճուղում կայ. մեր ցանկութիւնը և սկզբունքը այն է որ քիչ խօսելով և շատ գործելով մաքրուին այդ գործերը իսկ մեռեալ խնդիրները պէտք է հանել մէջտեղէն. մեզի կ'իյնայ յարգարել այն ճամբան և ուղղութիւնը, ինչ որ յառաջիկայ սերունդին նշանաբանը, ուղեցոյցը պիտի ըլլայ:

ՅԱԽԱԿՑԱԿԱՆ ԱՐՏԱԾԱԾՏՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆ ԷՖ. — Այժմ դժբախտութիւնը ունիմ ժողովիդ ներկայացնելու մեր երիտասարդ ընկերներէն Մալթիոյ երեսփոխան վաղամեռիկ Օննիկ էֆ. Զայեանի մահը: Պիտի խնդրեմ Տեղապահ Սրբազանէն որ հաճի «Հոգեոյ» մը արտասանել մեր ողբացեալ պաշտօնակցին յիշատակին համար:

(Բոլոր երեսփոխանք յոսնկայս՝ նախագահ Ս. Ը օրհնեց հանգուցելոյն յիշատակը):

ԱՍՏԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒՆԻ

ԱՏԵՆ ԷՖ. — Գարրիէան էֆ. համակով մը այսօրուան նիստին իր բացակայութիւնը յայտնած է:

ՀՐՈԺԱՐԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՆԴԱՄԱՑՈՒԹԵՆՆԷ

ԱՏԵՆ ԷՖ. — Անցեալ նիստին Կրօնական Ժողովի անդամ ընտրուած Օրմանեան Ս. գրով մը խրկած էր իր հրաժարականը, զոր ձեր ուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը)

Գերազնիւ Տէր Ատենապետ

Ազգային Ընդհանուր Ժողովոյ,

Ազգային Ժողովոյ երէկի նիստին մէջ Կրօնական Ժողովոյ ընտրեալներուն կարգին իմ անունս ալ յիշուեցաւ. ուստի կը փութամ յայտնել թէ պիտի չկարենամ այդ պաշտօնը ստանձնել:

Առաջին և գլխաւոր պատճառն է արդէն ձեռնարկած պատմական աշխատութիւնս, որուն պիտի չկարենամ հետեւիլ եթէ խղճի մտք ժողովական պաշտօնով զբաղիմ մինչ կարեւոր կը դատեմ և քաջաբերութիւններ կը ստանամ սոյն գրական աշխատութիւնս լրացնել:

Անկեղծ ըլլալու համար անցողաբար աւելցնեմ, թէ Կրօնական Ժողովի աշխատութիւնն, ներք կրօնական գործերով չեն պարփակուիր, այլ իսկ ժողովի մասնակցութեամբ և վարչական ուղղութեան գործակցութեամբ Քաջական Ժողովի հետ ալ կը գտնուի: Արդ զաղանիք մը չէ, որ պաշտօնի վրայ եղող Քաջական Ժողովը, ազնիւ անդամոց ու մանց բացառութեամբ, անհամակրութիւն մը

կը զգայ ինձ հանդէպ: Այդ պարագան կը թելադրէ նախահոգ զգուշաւորութիւն ունենալ քանի որ իմ ալ հաստատուն սկզբունքս է, որ վարչական ժողովները կազմողներ, պէտք է սրտիւ և սերտիւ կապակցեալ ըլլան: Հետեւապէս թէ՛ անձնական պատճառներ և թէ՛ պատշաճից պահանջներ, չեն ներքեր ինձ և կր փութամ շուտով յայտարարել, որպէս զի այժմէն պէտք եղած կարգադրութիւնները տնօրինէք, գործոց ընթացքին յապաղումներ չպատճառելու համար: Հաճեցէք. Տէր Ատենապետ, ընդունիլ յետադարձաց հաւաստիքը:

Մաղաքիա Արք. Օրմանեան

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Օրակարգ պէտք է անցնել այս հրաժարագիրը, զայն մեծամասնութեամբ նկատի առնելու համար:

ԱՏԵՆ ԷՖ. — Պատճառաբանեալ չէ ուրեմն:

Դ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Եւ յետոյ այս հրաժարականը տրուած է Կրօն. Ժողովի հաւաքական կազմին պետական վաւերացումը ստանալէն առաջ, հետեւաբար կրնանք հիմակ իսկ նկատի առնել:

(Ատենապետ էֆ. քուէի ենթարկելով Օրմանեան Ս. ի հրաժարականին պարզ ըլլալը. 15ի դէմ 18 քուէով ընդունուեցաւ որ այդ հրաժարականը պարզ է: Եւ յետոյ Ատենապետ էֆ. քուէի ենթարկելով այս հրաժարականին ընդունելութիւնը, 14ի դէմ 19 քուէով ընդունուեցաւ հրաժարականը:)

ՀԱՐՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՍԵ

ԱՏԵՆ ԷՖ. — Նաթանեան էֆ. գրով մը հարցում կ'ուղղէ Սալմաթօմրուքի մէջ իսլամացուցուած Սաթինիկ անուն աղջկան իսլամացման պարագաներու մասին: Ատենադպիր էֆ. պիտի կարդայ այդ գիրը:

մը ցոյց պիտի տամ, պէտք է նրաւորենք Դաւիթ Տ. Մովսէսեան էֆէնտին որ գայ Վարչութեան մէջ նստի և ուզած ուղղութիւնը տայ. առկէց դուրս «պօշ լաֆ» մ'իկ ընելու առանձն չունինք:

ԱՏԵՆ. էֆ. — Հոս պօշ լաֆեր չըլլար, ամէն մարդ կրնայ իր յարմար գտած միջոցները առաջարկել:

Ը. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ էֆ. — Այս ժողովը ազատ է իր որոշումներով արտայայտուիլ և կը տեսնեմ որ տեսակ մը տկարութիւն կայ այս խնդրոյն մէջ: Ամէն անգամ որ ժողովը հանգիստոր արտայայտութիւն մը ըրած է նմանօրինակ պարագայի մէջ, այս չորս պատերէն դուրս իրենց տպաւորութիւնը ունեցած են: Ներկայ պարագային մէջ ալ այս է խնդիրը և մեր ըրածը ազգային ցաւին արտայայտութիւնն է: Եթէ Ազգ. Ժողովը նշանօրինակ պարագայի մէջ ոչինչ չկրնար ընել, ուրեմն վերցուցէք Ազգ. Ժողովը, որուն դերը հրաժարականներ ընդունել չէ ապահովարար: Մենք անձերու հետ գործ չունինք, այլ մեր գործը նպատակներուն հետ է: Միայն սա կէտը պիտի հարցնեմ թէ արդեօք վաղը կրնա՞ր բացատրութիւն մը տալ թէ ի՞նչ պիտի ըլլայ հիմա երբ գործը այստեղ կը հետապնդուի, մինչդեռ դատապարտեալները էրզրում տարուած են:

ՆԱԹԱՆԵԱՆ էֆ. — Վարչութեան ղեկավարները կ'երևայ թէ իրապէս պէտք եղած կարևորութեամբ չեն լսուիր կառավարութեան կողմէ, քանի որ միշտ անհետեանք կը մնան սարսափելի ապօրինութիւններու դէմ եղած բողոքները: Ինչպէս գիտէք, կառավարութիւնը իբր բարենորոգմանց նախաքայլ օրէնք մը դրաւ, որուն տրամադրութեան համաձայն 20 տարիքը չլիւսակոխող անձերու իսլամացումը օրինաւոր պիտի չընկատուէր մինչդեռ այժմ ուրիշ ձև մը գտած են, ճիշտն է՝ կ'ընեն...

ԱՏԵՆ. էֆ. — Նախանձան էֆ. ձեր այդ խօսքերը վերապահեցէք յաջորդ նիստին: Տրուած բացատրութիւններէն կ'ե-

րեւայ թէ Վարչութիւնը ձեռքէն եկածը ըրած է յիշեալ գերի զինուորներու մասին, ժողովս կը յանձնարարէ Վարչութեան որ անգամ մը եւս մղում տայ այս խնդրին և մինչեւ վերջը հետապնդէ: Ուրիշ գիր մ'ալ կայ Ճանկիւղեան էֆէնտինէ:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը)

Ազնուաշուք Ատենապետ էֆ.

Ազգ. Երեսփ. Ժողովի,

Վանքոսպի Յուլիս 20ի համարին մէջ զարմանքով կարդացինք նկարագրութիւնը Վանայ գաւառական Երեսփ. Ժողովի բացման նիստին, ուրկէ կը տեսնուի որ կեդրոնի Ազգ. Ժողովի մէջ ամենածանր ամբաստանութեանց տակ գտնուող յայտնի Դաշնակցական գործիչ Իշխան կոչեցեալը ընտրուած է ատենապետ Գաւառ. Երեսփոխանական Ժողովի, հակառակ նոյն իսկ Կ. Պոլսէն տրուած պաշտօնական հրահանգի, ըստ որում իշխան ոչ միայն չէր կրնար ատենապետ ընտրուիլ ժողովին, այլ իբր ամբաստանեալ՝ երեսփոխան ալ չէր կրնար ըլլալ, քանի որ այս ժողովին մէջ մէկէ աւելի անգամներ ամբաստանեալ երեսփոխաններ զրկուած են ամէն իրաւունքէ: Արդ կուզանք առաջարկել որ Ա. կարգ խնդրոցի մէջ գտնուող Ազգամարի յափշտակութեանց խնդիրը օրակարգ անցնի: Բ. Գաղ. Ժողովը հաճի բացատրութիւն տալ Վանայ գաւառին մէջ կատարուող ապօրէյ ընտրութեանց և վաւերացումներու դէմ իր ձեռք առած միջոցներու մասին և Գ. Հրա. հանգել Վասպուրականի առաջնորդութեան, որպէս զի ամբաստանեալները ամէն պաշտօնէ կախակայէ մինչեւ անոնց խնդրին քննութիւնն ու որոշման մը յանգիլը:

Յարգանքներով
Յ. Կ. Ճանկիւղեան

ԱՏԵՆ. էֆ. — Այս մասին ի՞նչ պիտի ըսէ Վարչութիւնը:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ էֆ. — Վարչութիւնս այս

մասին պաշտօնական դեռ ոչինչ տեղեկութիւն չունի:

ԱՏԵՆ. էֆ. — Վարչութիւնը կ'ըսէ թէ այս խնդրոյն նկատմամբ տեղեկութիւն չունի:

Յ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ էֆ. — Ես կը հաստատեմ թէ քսանէ աւելի բողոքագրեր եկած են, եթէ այս վիճակը շարունակէ, բան մը չպիտի մնայ Ազգամարայ մէջ:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ էֆ. — Վանայ Գաւառ. Ժողովի ընտրութեանց մասին դեռ ո'չէ պաշտօնագիր չենք ստացած, իսկ եթէ 20է աւելի գրերը Ազգամարայ հետ առնչութիւն ունին, եւ նկատի չեն առնուած՝ անոր յանցանքը կը ծանրանայ աւելի այս ժողովին վերայ, որ մինչև հիմա նկատի առած չէ Օրա կարգի վրալ գտնուած այս խնդիրը:

ԱՏԵՆ. էֆ. — Ազգամարի խնդիրը մեր դիւանին վրայ չէ:

Յ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ էֆ. — Կը բողոքենք որ Հայոց հողերը կը գրաւեն, եթէ, կը կրկնեմ, այսպէս շարունակուի Ազգամարայ մէջ բան պիտի չմնայ, Վարչութիւնը պէտք չէ վաւերացնէ Իշխանին Վանայ Գաւառ. Ժողովի ատենապետ ընտրութիւնը, մինչև որ ամբաստանութիւններէն մաքրուի:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ էֆ. — Իշխանը Վանայ Գաւառ. Ժողովին ատենապետ ընտրուել է, Գաւառ. Ժողովին ատենապետ ընտրուել է, նախան տեղեկութիւն չունինք, ինչպէս ըսի, և չէինք կրնար ալ նախատեսել թէ Իշխանը ատենապետ պիտի ընտրուի, որպէս զի հրա հանգ տայինք հակառակը չօրոշելու: Վարչութիւնը երբ պաշտօնագէտ տեղեկութիւն ստանայ, կարեւորը կը սնորհնէ:

Յ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ էֆ. — Հրահանգ պիտի տայ կախակայելու:

ԱՏԵՆ. էֆ. — Ձեռ կրնար ըսել:

ՎԱՐԳԳԻՍ էֆ. — Ձրպարաիչ ես դուն, եթէ ճիշդ էր Ազգամարայ թաւանը, յետոյ ինչո՞ւ ուրացար:

ՃԱՆԿԻՒԼԵԱՆ էֆ. — Փաստերով, վկայերով պիտի հաստատեմ:

(Այս միջոցին Վարդգէս և Ճանկիւղեան էֆ. ներս միջև միջադէպ մը ծագելով եւ աղմուկ մը յառաջ գալով Ատենապետ էֆ. զտղար տուաւ ժողովին:)

ԱՏԵՆ. էֆ. — Նիստը վերադարձուած է. հիմա պիտի կարդացուի Կ. Ս. չատուրեան էֆ. ի մէկ գիրը:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը)

Վսեմ. Ատենապետ էֆ.

Ազգ. Պատկ. Ժողովոյ,

Նախորդ Պատրիարք Արշարունի Ս. ի հրաժարականին կառավարութեան ուղղուած թուրքերէն պատճէնը թերթերուն մէջ կարդացինք և ցաւով տեսնուեցաւ որ Արշարունի Ս. ի հրաժարման բուն պատճառը եղող Ռոստոմովի դէպքը, ուրկէ առաջ եկած էր հիւանտոսթոյի դէպքը, ուրկէ առաջ եկած էր վերցուած դուրսը բողոքովին փոխուած ու վերցուած էր: Կը խնդրեմ որ այս մասին Վարչութիւնը հաճի մեզ տեղեկագրել թէ արդեօք սխալ էր թերթերուն գրածը, և եթէ ճիշդ էր, ի՞նչ էր այս փոփոխման պատճառը:

Մնամ յարգանք
Կույեղնիկ Խաչատուրեան

Կ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ էֆ. — Իրաւունք ունէի այս հարցումը ուղղելու, քանի որ հոս բերուած հրաժարագիրը տարբեր էր և թերթերու մէջ հրատարակուած կառավարութեան ներկայացուածը տարբեր. Վարչութիւնը այս մասին ի՞նչ լսելիք ունի:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ էֆ. — Արշարունի Ս. ի հրաժարագիրը եղածին պէս հաղորդուեցաւ թերթերուն, եթէ տակի մասը ո'չէ պատճառով չէ հրատարակուած, պատճառը չենք գիտեր:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ էֆ. — Կառավարու-

Թեան ներկայացուած հրաժարագրին համար Վարչութիւնը պատասխանատու չէ. Ն. Սրբազնութիւնը անձնապէս ներկայացուցած ըլլալու է իր հրաժարականը:

ԱՏԵՆ. ԷՖ.— Հետեալը անհետանք պիտի թողուի այս հարցագիրը:

ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՈՒՍԱՆՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆ. ԷՖ.— Զմիւռնիոյ մէջ երեսփոխանական ընտրութիւն կատարուած և արդիւնքը տեղեկագրուած ըլլալով, պիտի կարգանք այդ մասին Վարչութեան տեղեկագիրը:

(Աստեղագիր էֆ.ն կարգաց Վարչութեան հետեալ տեղեկագիրը)

Վսեմաշուք Աստեղագիր էֆէնտի

Ազգային Երեսփոխանական

Ընդհանուր Ժողովոյ

Զմիւռնիոյ Գաւառական Ընդհանուր Ժողովին կողմէ՝ հրաժարեալ Երեսփոխանին տեղ ըստ հրահանգի Պատրիարքարանիս նոր ընտրութիւն կատարուած և Յուլիս 23 թուականու տեղեկագրով ներկայացուած է արդիւնքը յորմէ կը տեսնուի թէ՛ Ազն. Լեւոն էֆէնտի Տնտեսեան Ազգային Երեսփոխան ընտրուած է՝ քուէներու բացարձակ առաւելութեամբ:

Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովը՝ Սահմանադրութեան 81րդ յօդուածին համաձայն, ստուգելով՝ նորընտիր Երեսփոխանին ընտրելութեան պայմաններն, ըստ ամենայնի համաձայն գտաւ Սահմանադրութեան տրամադրութեանց: Հետեալը ընդ գրոյս Պատկառելի Ժողովիդ կը մատուցանէ ընտրական տեղեկագիրը:

Մնամք յարգանք

Ի Դիմաց Քաղաքական Ժողովոյ

Աստեղագիր Վ. Աստեղագիր

Ա. Յ. Գասպարեան Տօգր. Կ. Յ. Փառայեան

(Աստեղագիր էֆ. քուէի դնելով սոյն ընտրութիւնը, Ժողովին որոշմամբ Զմիւռնիոյ Երեսփոխան հռչակեց Լեւոն էֆ. Տնտեսեանը:)

Վ. ԹԵՔԷՆԱՆ ԷՖ — Ես կը բողոքեմ զիւնին դէմ, իր քիչ մը տառաջան կամայական ընթացքին համար: Երեսփոխան մը հոս հարցում մը բերեր է, դիւանը իրաւունք չունի զայն խափանելու, մինչև որ հարցումին տէրը գոհացում չստանայ կամ Ժողովը բաւական չնկատէ տրուած բացատրութիւնները: Երեսփոխան մը հարցում մը բերեր է եւ կ'ուզէ տեղեկանալ թէ ինչու հրաժարեալ Պատրիարքը տարբեր տարբեր հրաժարագրեր ներկայացուցած է Ազգ. Ժողովին և կառավարութեան, ո՛ր է երեսփոխան իրաւունք ունի այս հարցումը ընելու, որովհետեւ թերեւս նախորդ պատրիարքը ազգին հաճելի ըլլալու համար ուրիշ ոճով հրաժարագիր մը խմբագրած է, մինչդեռ կառավարութեան ալ տարբեր, մենք պէտք է մեր եկեղեցականները ճանչնանք նոյն իսկ անոնց պատրիարքութենէն ետքն ալ: Վարչութիւնը իբր ամէնէն ձեռնհասը կրնար ըսել թէ հրաժարերու պատճէնը նոյնն է թէ չէ և թէ յայտարարել որ ինքը դեր մը չունի տառը մէջ:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ. — Պարապ խնդիրներու համար չենք կրնար հոս ատեն անցընել ատենապետ էֆ. Թո՛ղ զուրը ստուգեն այս պարագաները:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ուրիշ խնդիր չկայ:

Վ. ԹԵՔԷՆԱՆ ԷՖ. — Խորովեա՛ն էֆ., դուք այս Ժողովին բոլոր չէք:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ. — Բայց այս տեսակ խնդիրներու համար ալ գլուխ ուռեցնելու չենք եկած հոս:

ԱՏԵՆ. ԷՖ. — Թէքեան էֆ.ին պատասխանեմ երկու բառով. ես կարծեցի նախապէս թէ Վարչութեան տուած պատասխանը բաւական համարուեցաւ, թիւրիմացութիւն մը կայ:

Վ. ԹԵՔԷՆԱՆ ԷՖ. — Մենք սկզբունքի

խնդիր մը հանել կ'ուզենք, և հետեալը չենք ստացած այն տեղեկութիւնը որ իրաւամբ գիտնալու է ամէն երեսփոխան, Սրբաւորնի սրբազանի հրաժարականը ինչո՞ւ երկու տարբեր բնագիրներէ կը բաղկանայ, կը խնդրեմ, ես չեմ գիտեր, հաճեցէք զիս ալ տեսաբանել: Զեր պարտականութիւնը, Աստեղագիր էֆ., այսպէս խնդիրները փակելուն մէջ չկայանար:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. (Յանուն Վարչութեան) Այս մասին հարցում ուղղող երեսփոխանը չբաւականացաւ, կ'ուզեմ զինքը գոհացնել հետեալը մէկ քանի բառերով բացատրեմ խնդիրը. նախ սա ըսեմ որ հարցումը սխալ հասցէի ուղղուած է: Նախորդ Պատրիարքին հասցէի հրաժարագիրը Մայր-Դիւանիդ կողմէ հաղորդուեցաւ թերթերուն. իսկ Ն. Սրբազնութեան թուրքերէն հրաժարագրին մատուցուելէն առաջ Վարչութիւնը ո՛ր է տեղեկութիւն չունէր. այդ հրաժարագիրը կառավարութեան տրուած է առանց Վարչութեան իմաց տալու, որով տեղեկութիւն չունինք տարբերութենէն:

Դ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ. — Տրուած բացատրութիւնները կը պնդեն թէ Սրբաւորնի պատրիարքին կառավարութեան և ազգին ներկայացուցած հրաժարագրերը տարբեր են: Պատրիարք մը ի՞նչպէս կրնայ թուրքերէնը տարբեր և հայերէնը ուրիշ կերպ հրաժարուի:

Ժարականներ ներկայացնել, այսինքն քիչ մը աւելի բաց խօսիմ, Պատրիարքը մեզի ներկայացուցած հրաժարագրին մէջ կ'ըսէ թէ Ռոտտսթոյի դէպքերը բոլորովին ընկճեցին զինքը, մինչդեռ կառավարութեան ներկայացուցածին մէջ չկայ այս պարագան. անցեալ անգամ արդէն ես բողոքելի տնոր համար որ անգամ արդէն ես բողոքելի տնոր համար որ Ն. Սրբազնութիւնը իր հրաժարականը մեզի չտուած կառավարութեան զրկեր է զայն, այդ բողոքս արձանագրուեցաւ, այսօր ալ կը կրկնեմ զայն: Որպէս զի ստուգուի թէ իրաւապէս երկու հրաժարագրերուն մէջ տարբերութիւն կ'այ, ինչ որ շատ ծիծաղելի է. պէտք է Վարչութիւնը Դատական նախարարութենէն կամ, եթէ կայ, Պատրիարքարանի տրուածագրութեան դիւանէն գտնէ կառավարութեան ներկայացուած հրաժարագրին պատճէնը եւ բերէ Ժողովիս գոնէ հոս արձանագրուելու համար:

ԱՏԵՆ. ԷՖ. — Դուրի՞ք էֆ.ի այս առաջարկին եթէ Ժողովը մեծամասնութեամբ համաձայն է, ուստի այս որոշումով ատեններ կը փակեմ, քանի որ մեծամասնութիւն չկայ:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

(Ատենը փակուեցաւ Ժամը 4ու կէսէն):

Աստեղագիր Աստեղագիր
Հ. ԱՐԱՄԵԱՆՅ ՏՔ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ



(Գ. Վիճակ)		
Գում-գաբու, Գում գաբուի շուրս		
69.	Դաւիթ	էֆ. Տէր-Մովսէսեան
70.	Համբարձում	Պօյաճեան
71.	Սարգիս	Սուին
72.		
Կէսիկ-վաւա		
73.	Հմայեակ	էֆ. Զրամեանց
74.	Յարութիւն	» Զանկիւեան
75.	Յակոբ	» Ուետիսեան
76.	Յակոբ	» Նշանեան
77.	Ներսէս	» Զարարեան
Սամաքիա Ս. Կէորգ		
78.	Գրիգոր	էֆ. Զօհրասպ
79.	Լեւոն	» Սասթնեան
80.	Հակ	» Խօճատարեան
81.	Պարզեւ	» Փափազեան
82.	Լեւոն	» Սեղորոսեան
83.	Ռուբէն	» Փափազեան
84.		
(Ե. Վիճակ)		
Գում գկու ճնուկ — Ինասիէ		
85.	Երուանդ	էֆ. Խորասան
86.	Լեւոն	» Տէմիճիպաշեան
87.	Ռուբէն	» Զարդարեան
88.	Ոսկան	» Մարտիկ ան
89.	Կոպեռնիկ	» Խաչատուրեան
Թօփ-գաբու		
90.		
91.	Երուանդ	էֆ. Ղալաքիա-Պէյֆօղ
92.	Նշան	» Նառլը-գաբու
93.	Տիգրան	էֆ. Գալըպճեան
		Մանուէլեան
Սամաքիա Ալքըմէրմէր		
94.		
Սկիւսար Ս. Խաչ		
95.	Բարսեղ	էֆ. Աւետիսեան
96.	Դարեգին	» Տէմիճիպաշեան
97.	Յարութիւն	» Շահրիկեան
98.	Վարդգէս	» Սէրէնկիւեան
99.	Յակոբ	» Մինասեան
Իւմէլի-ճիսար. Պօյաճը-գիւղ, Եւնի-գիւղ		
100.	Արքաճամ	էֆ. Տէր-Յակոբեան

ԿԱՐԱՆԱԳԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՆՔ

(Ա. Վիճակ)		
101.	Վահան	էֆ. Եղիպսոս
		» Թէքէեան
102.	Յակոբ	էֆ. Եղիպսոս
		» Պօնոնգեան
103.	Տօթ. Փաշեան	էֆ. Խարբերդ
		» Կարին
104.	Սողոմոն	էֆ. Տէր-Ազարեան
105.		» Կիրին—Մանգըլթ

Մուտ		
106.	Գեղամ	էֆ. Տէր Կարապետեան
		Զմեկաձագ—Զարսանձագ
107.		» Տապիզոն
108.	Օննիկ	էֆ. Զիֆթէ-Սարաֆ
(Բ. Վիճակ)		
		Աղբամար
109.		» Բալու
110.	Մելրոն	էֆ. Կիւրճեան
		» Եօղլաա
111.	Աւետիս	էֆ. Զինկիւեան
		» Կիսարիա
112.	Վահան	էֆ. Էսաեան
		» Զալէպ—Այնթապ
113.	Սարգիս	էֆ. Գնաճեան
		» Նիկոմիդիա
114.	Տօթ. Գրիգոր	էֆ. Ճէլա
		» Պաղտա
115.	Տօթ. Ներսէս	էֆ. Թիւիսեան
		» Սղերդ
116.	Սերովբէ	էֆ. Նորատունկեան
(Գ. Վիճակ)		
		Ակն
117.	Ատովմ	էֆ. Երեցեան
		» Արաբկիր
118.	Արթաքի	էֆ. Սարաֆեան
		» Եղեգիա
119.	Սեպուհ	էֆ. Իւթիւճեան
		» Զմիւռնիա
120.	Լեւոն	էֆ. Տնտեսեան
		» Զանքն
121.	Տէվլէթ	էֆ. Տատրեան
		» Մալաքիա
122.		
		» Պանսրմա—Պալլիքսիր
123.	Տիրան	էֆ. Երկանեան
		» Վան
124.		
(Դ. Վիճակ)		
		Աղբամարիս
125.	Օննիկ	էֆ. Տէրունեան
		» Ասանա
126.	Արիստակէս	էֆ. Գասպարեան
		» Բաղէ
127.	Աղէքսանդր	էֆ. Փանոսեան
		» Կուսիճա—Աթիճն-Գարա-Հիսար
128.	Զարեհ	էֆ. Խօրասանձէա

	Պոուսա	Գաղափա
129. Գասպար	էֆ. Նեմփէ Ποσυρο	135. Տր. Խաչիկ
130.		էֆ. Պողոսեան Գօնեա
	Տիգրանակէրս	136. Բարթող
131. Տիգրան	էֆ. Նազաշեան	էֆ. Զօրեան Երզնկա
	Տիվրիկ	137. Դարբիէլ
132. Դէրդ	էֆ. Մեծատուրեան (Կ. Վինակ)	էֆ. Նորատունկեան Մարտ — Զէյթուն
	Ամասիա — Մարզուսն	138. Սմբատ
133. Տիգրան	էֆ. Մարտիկեան Բաբերդ	էֆ. Բիւրատ Շապին-Գարանիսար
		139. Ժագ
34. Երուանդ	էֆ. Սրմաբէշիանյրեան	էֆ. Սայապալեան Աբասիա
		140. Տօրթ. Նազաբէթ
		էֆ. Տաղաւաբեան